

ԱՐԱՐԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԹԻՐԱՆ ԳԱՌՆԱԼ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎԱՆՆԵԱՆ

Երիտասարդության և մարմնակրթության նախարար Սեպուհ Յովանյանն երկկողմանի և արաբական աշխարհի երիտասարդության համախմբումը իրենց իրաւունքներուն և ազգային արժեքներուն շուրջ, դիմադրելու համար արաբ ազգին ուղղուած բոլոր չարիքներուն և վայրագ ոճին:

Մարտի 1-ին Սեպուհ Յովանյանը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում Կոմիտասի համալսարանում կատարեց խոսք: Սեպուհ Յովանյանը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կատարեց խոսք: Սեպուհ Յովանյանը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կատարեց խոսք:

Սեպուհ Յովանյանը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կատարեց խոսք: Սեպուհ Յովանյանը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կատարեց խոսք:

Սեպուհ Յովանյանը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կատարեց խոսք: Սեպուհ Յովանյանը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կատարեց խոսք:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ալիս Ռոստիկեան և զուգակցը՝ Վահէ Տէր և տիկին Հայկ և Սեդա Քէշիշեան և զուգակուհիք

Տէր և տիկին Յակոբ և Ռիթա Քէշիշեան և զուգակուհիք

Տիկին Էլմաստ Ռոստիկեան և զուգակուհիք՝ Մարկո Տէր և տիկին Սարգիս Ռոստիկեան և զուգակուհիք

Տէր և տիկին Մարգար Ռոստիկեան և զուգակուհիք

Տիկին Ովսաննա Ռոստիկեան և զուգակուհիք

Տէր և տիկին Քրիստափոր Թապազեան և զուգակուհիք

Մարգարեան ընտանիք
Աւագեան ընտանիք
Ղազարեան ընտանիք
Յովսէփեան ընտանիք
Տէրտէրեան ընտանիք
Այվազեան ընտանիք
Քէշիշեան ընտանիք
և համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոջ և հարազատին՝

ՅԱԿՈՒ ՌՍՏԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 31 Հոկտեմբեր 2002ին, ժեհնաւորի հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 1 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիբասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապո:
- Ցաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, Ուրբաթ 1, Շաբաթ 2 և Կիրակի 3 Նոյեմբերին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել ԼՕՍԻ «Արաբի Պուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին:

ՄԱՀԱԶԴ

Տէր և տիկին Յակոբ Կէպէնեան և զուգակուհիք՝ Անի, Գօգօ և Վիգէն

Տիկին Սոնա Վասիլեան և զուգակուհիք՝ Սեդա Տիկին Արտեմիս Մարկոսեան և զուգակուհիք

Տէր և տիկին Նուար Կէպէնեան և զուգակուհիք

Տէր և տիկին Սարգիս Կէպէնեան և զուգակուհիք

Տիկին Արմենուհի Կէպէնեան և զուգակուհիք

Տիար Յովսէփ Տաղեան և զուգակուհիք

Տէր և տիկին Յովհաննէս Յովհաննէսեան և զուգակուհիք

Արժ. Տ. Սեւակ քնյ. Վասիլեան և ընտանիք

Արժ. Տ. Վիգէն քնյ. Վասիլեան և ընտանիք

Տիկին Վարդուհի Վասիլեան և զուգակուհիք

Տէր և տիկին Վահէ Վասիլեան և զուգակուհիք

և համայն ազգականներ կը գումար իրենց դստեր, քրոջ, թոռան և հարազատին՝

ՄԱՐԱԼ ԿԵՊԵՆԵԱՆԻ (ՕՏԵԱԿ՝ ՊԷՅՐՈՒՅ, 1978ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 31 Հոկտեմբեր 2002ին, առաւօտեան ժամը 5:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 1 Նոյեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապո:
- Ցաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Չալքա, «Պետրեան» շէնք, Ա. յարկ, Ուրբաթ 1, Շաբաթ 2 և Կիրակի 3 Նոյեմբերին:

ՆԻԱՄԻ ՍՕՏ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԵՑԱՆ 1977ԻՆ ԹԱՂՈՒԱԾ ԴԻԱԿՆԵՐ

Նիամի մօտ երկկողմանի 1977ին նախատեսուած Դիմադրութեան մարտիկներու դիակներ: Նիամի համար ջուրի աւազան կառուցելու նպատակով նախապէս խորայնէն բանակի Շրայիէ դիրքի աւազանները վերցրուող «պուլտոյր»-ին վարորդը նկատեց կմախքները և անմիջապէս տեղեակ պահեց իրեն ընկերակցող բանակայինները: Ի յայտ եկաւ, որ տունը գանկի կմախքները կը պատկանին Թամէր

Հասան Աուսի (ծնած՝ 1955ին, Ք.Ֆարշուպ) և Հիւսէյն Ալի Ղարայի (ծնեալ՝ 1962ին, Տրապիս): Անոնցմէ մէկը Պասսի իրաքեան թելի անդամ էր, իսկ միւրը՝ Տաթիի անոնք մաս կը կապէին դիմադրութեան ջոկատի մը, որ 1977ին դէմ դրաւ խորայնէն ուժերու Նիամի ուղղութեամբ յառաջխաղացքին: Միւս կողմէ, խորայնէն օդուծը երկնքում մը եւս խախտեց Լիբանանի օդային սահմանները և

թռչքներ կատարեց սահմանային գօտիի արեւելեան հատուածին, Հասպայայի և Մարտայայի վերել: դիմադրութեան ուժերը հակաօդային կրակ բացին թշնամի օդանավներուն ուղղութեամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական երեսփոխանական գրասենեակը կը յայտնէ, որ բանակի ընդհանուր հրամանատարութիւնը կողմնակալ 1984ի ծնունդ այն լիբանանահայատակներուն, որոնք ամբողջացուցած են 18 տարիքը, այդ տարիքին հասնելէ ետք մինչեւ երեք ամիս ներկայանալու տարբեր շրջաններու մէջ բանակի պիտոտական ծառայութեան գրասենեակներ կ'եկուցելու համար իրենց կարգավիճակին ու բնակութեան հասցէին մասին, այս թէ ոչ ծառայութեան խոստովանող պիտի նկատուին: Ենթականներ այդ գրասենեակներուն մօտ պիտի արձանագրուին և անհրաժեշտ պարագային պիտի ներկայացնեն ծառայութեան վերջ մնալու կամ ծառայութիւնը յետաձգելու դիմումները: Պէտք է դիմել «ըմբ»-ի վայրի գրասենեակ և ո՛չ թէ բնակութեան շրջանի գրասենեակներուն:



ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԵՐ
Չոր ութիս առթիւնով լուսանկարներ տպուող օրի հասած ԱՐԿԻՎԱԿԱՆ ՏԻՐԵՆՆԱԿԻ միջոցով, որպէսզ որ քանակաւ չափովով Ստանձնուի՝ 20 վայրկեանէն:
Լուսանկարները կ'արձանագրենք CD-ի և կամ FLOPPY տիպիներով վրայ:
Cameraներու ճոխ հաւաքածոյ, պլակոմներ և նկարի շրջանակներու ընտիր տեսակներ:
Կը ստանձնենք ուրախ առիթներով photo նկարահանումը, արդիական մեքենաներով և յարմարագոյն գիներով:
Պուրճ Համուտ, Քաղաքապետարանի փողոց
«Սամբը Արի»-ի դիմաց, Կեդ. 01-261858 և 01-255992

Bon Marché



Rideaux (Accessoires, Couture et Installations)
Couvertures - Draps de Lit - Serviettes - Eponges - Nappes de table
et un Grand choix de Linge de maison
Uniformes pour medecins et infirmieres
Robes de bonnes
Place de la Municipalite de Hourj Hammoud Rue de la Municipalite N31 - Tel: (01) 257266

Բարձր Հովանաւորութեամբ Երիտասարդութեան և Մարմնակրթութեան Նախարար ՏՈՔԹ. ՍԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ

Կազմակերպութեամբ
Հ.Յ.Դ. ԶԱԲԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԾԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԳԷՍ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 2 Նոյեմբեր 2002ին, երեկոյեան ժամը 9:00ին.
Metropolitan Palace դահլիճի.
«Dubai Hall» ճաշարանին մէջ. Հրը թաղէ:

ՆԵՄԱՐ ԹՐՔԱԿԱՆ ՀՎԿԱՌՈՒՍ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԾԻՆԱՅԻՆ ԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ ԵՆ

Դարձեալ ամպոտած է ռուս - թրքական յարաբերութեանց երկիրը:

Չէշէն ահաբեկիչներու կողմէ անցեալ շաբաթ Մոսկուայի թատերասրահին գրաւումէն ի վեր, թրքական հակառուս տրամադրութիւնները անգամ մը եւս բացայայտուած են: Ըստ Անգարայի մէջ Ռուսիոյ դեսպան Ալեքսանտր Լեպետեի՝ թրքական բանաւոր և գրաւոր լրատուամիջոցները հակառուս դիրքորոշումով կատարած են իրենց լրատուութիւնները Մոսկուայի դէպքին գծով, ինչ որ հաշտ աչքով չի դիտուիր անշուշտ Կրեմլինի կողմէ:

Ալեքի՛ն. դեսպանը հրապարակաւ հարց տունած է.

«Արդեօք Ռուսիոյ ընդդիմանալը թուրքերուն համար ծինային բնաւորութիւն մըն է»:

Պատմութեան ծանօթ ռեէլ անհատ կրնայ ռուս դիւանագետին հարցումին անվարան «այո» պատասխանել: Ռուս - թրքական յարաբերութիւնները լարուած եղած են ընդհանրապէս պատմութեան ընթացքին, յատկապէս 17-18րդ դարերէն սկսեալ. Մեծն Պետրոսի օրերէն, երբ թուրքիա նեցուկ ունենալով Անգլիան՝ ոգի ի բոխն պայքարած է Մոսկուայի դէմ, ամէն գնով արգելք հանդիսանալու անոր, որ նեղուցներուն և ընդհանրապէս Սեւ ժովուս տիրապետութիւնը չունենայ, հոն հակաշէյն չհաստատէ. սակայն Մեծն Պետրոս և մանաւանդ Կատարինէ ցարուհին վերջնականապէս տունած են հարուածը թուրքիոյ և յաջողած են իրենց ամբողջական հակաշէյնի ենթարկել շրջանը, իմա՛ Կովկասը, մինչեւ օրս: Ի վերջոյ ի՞նչ էր գլխաւոր պատճառը 1877-78ի ռուս - թրքական պատերազմին, կամ ընդհանրապէս ռուս - թրքական քախուսներուն, եթէ ոչ վերջ յիշուած հոլովոյթը:

Այսօր տարբեր չէ երեկէն: Թուրքիա կը հանդիսանայ Ռուսիոյ գլխաւոր հակառակորդներէն մէկը թէ՛ իբրեւ պատմական թշնամի, թէ՛ իբրեւ Ուաշինկթընի սերտ դաշնակից և թէ՛ իբրեւ համաթուրանականութեան գաղափարախօսութիւնը մշտական կրակի վրայ տաք պահող մղիչ ուժը: Թրքացեղ ժողովուրդները իր շուրջը համախմբելով, պանոնք ֆինանսաւորելով, անոնք մօտ արմատականութիւնն ու ծայրայեղականութիւնը հրահրելով Անգարա կը ձգտի այդ երապը իրականացնել, Անատոլիոյն մինչեւ Մայրաքաղաք Արեւելք՝ չիւսական պարիսպներ կայարութիւն ստեղծել. նոյնիսկ եթէ չի յօսուիր, ակնարկութիւն անգամ չ'ընէր ներկայիս այդ մասին: Սակայն շատ հաւանաբար դիւանագիտական խորամանկ այս լոռութիւնը քանդուի, եթէ յառաջիկայ Կիրակի օր արմատական իւրամականները կամ ուղիւս փառ աջակողմեանները յաղթական դուրս գան թուրքիոյ խորհրդարանական ընտրութիւններէն: Եւ այն ատեն Անգարա - Մոսկուա յարաբերութիւնները կրնան շատ անելի վատթարանալ քան այսօր, ռուս - թրքական յարաբերութիւնները կրնան վերադառնալ 19րդ դարու սկիզբին, մանաւանդ որ 11 Սեպտեմբեր 2001ի ահաբեկչական անկիւնադարձային արարքէն ետք այսօր աշխարհը յայտնապէս դարձեալ կ'ուղղուի դէպի երկբեւեղ դրոթիւն, իսկ այդ բեւեռներէն մէկը անկասկած որ Ռուսիան կը անդիսանայ, անշուշտ Եւրոպական Միութիւնը իրեն դաշնակից ունենալով:

Միւս բեւեռին՝ Ուաշինկթընի գծին վրայ երթեւեկող Անգարա հետեւաբար կը մնայ Մոսկուայի մշտական հակառակորդներէն մէկը, պատմական թշնամին, Լեպետեի բառերով՝ ծինային, բնապայային տունեայներով հակառուս վտանգաւոր հաւաքականութիւնը:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՀԱԶԴ

Տիկին Եղիսաբէթ Մելիտոնեան և զուգակուհիք՝ Տէր և տիկին Գէորգ Մելիտոնեան և զուգակուհիք
Տէր և տիկին Յովիկ Մելիտոնեան և զուգակուհիք
Տէր և տիկին Գրիգոր Շարլաբեան և զուգակուհիք
Տէր և տիկին Ժորժ Սաատէ և զուգակուհիք
Տէր և տիկին Կարօ Գրեքեան և զուգակուհիք
Աչրգեան ընտանիք
Մագլումեան ընտանիք
Ստամպուլեան ընտանիք
Պչաքեան ընտանիք
Պչտիկեան ընտանիք
և համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր և հարազատին՝

ՅՈՎԱՍԷՓ ՄԵԼԻՏՈՆԵԱՆԻ (ՕՏԵԱԿ՝ 1927ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 30 Հոկտեմբեր 2002ին առաւօտեան ժամը 9:00ին իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ՝ Հինգշաբթի, 31 Հոկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապո:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանին մէջ Ամանոս, Ապու Արքիմ կայարանի դիմաց, Բ. յարկ, Ուրբաթ 1, Շաբաթ 2 և Կիրակի 3 Նոյեմբերին:

ՀՐԱՇԱԼԻ ԱՅԼ ԱԶԱՆՈՒԹԻՒՆ՝ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԷՆ՝

«ԻՆՁՈՐՆԵՇՆՈՒՄ ԵՐՈՒՄ ԹՐԻՊԻՈՒՄ»-Ի ԱՐՈՒԵՍՏԻ ԸՆՆԱԴԱՏ ՍՈՒՐԵՆ ՍԵԼԻԵՏԱՆ ԿԸ ԿԵՐԱՆՈՒՄԸ ԱՃՈՒՐԴԻ ՍԱՐՁԻՆ ԱՆՆԱԽԱՏԵՍԵԼԻ ԲՆՈՅԹԸ ԵՒ ԿԱՃԱՌԻ ԴՐՈՒՄԸ ԻՐԵՐՈՒՄ ԱՆՈՐՈՇ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒՅԱԾ ԸԱՐՑԵՐԸ: ԱՆ ՆԱԵՒ Կ'ԱԿՆԱՐԿԷ ԸՈՎՏԵՄԲԵՐԻ ԿԵՍԵՐՈՒՄ ԿԱՃԱՌՈՒՄԸ ԸԱՅՎԱԿԱՆ ՈՃՈՎ ԿԱՒԷ ԻՐԻ ՍԸ

Մշակույթի պատմաբաններ ապագային պիտի գործադրեն ի տես Արեւմուտքի յարատեւ անկարողութեան՝ դիտելու իսլամական երկիրները այնպէս, ինչպէս կը դիտեն աշխարհի մնացեալ վայրերը: Հիմնական տեղեկութիւններու պակասը եւ բոլորովին այլազան մշակույթներու տարբեր իրականութիւններուն սնուցումը քաղաքական հասարակաց մօտեցումով իրենց արտացոլացումը կը գտնեն արեւստի աշխարհին մէջ:

Մինչ անուշի մասնագէտներ կը պատրաստէին պատկերագիրքեր «Իսլամական արեւստի եւ ձեռագիրներ» (Քրիսթի'զ), «Իսլամական աշխարհի արուեստները» (Սոթի'զ) եւ «Իսլամական եւ հնդկական արուեստը» (Պոն-ճամզ) վերնագիրներով, այս անիմաստ բնորոշումները հաւանաբար որոշ անհանգստութիւն պատճառեցին անոնց:

Ներկայացուած խառնակոյտը՝ արաբական Սպանիայէն մինչեւ Չինաստան եւ անցնելով իրանեան աշխարհէն, որ առիւծի բաժինը ունի կանուխ ժամանակներու արուեստին մէջ, տեսողական առումով նոյնքան անյարիր է, որքան՝ քարոլինեան ժամանակներէն մինչեւ վիքթորեան ժամանակաշրջանի Եւրոպան ընդգրկող «քրիստոնէական արուեստի» մը բնորոշումը:

Կարելի չէ մեղադրել անուշի վաճառատուները, որոնք կը հետեւին թանկարաններու օրինակին: Միայն նոր է, որ կը մտածուի ցուցադրել արուեստի այնպիսի գործեր, որոնք կ'արտացոլացնեն տեսողական արուեստի մեծ տարբերութիւններ արաբական, իրանեան եւ վիքթորեան արուեստներուն միջեւ, նոյնիսկ թէ՛ որոշ ժամանակներու այս արուեստները հանդիպած են իրարու, ինչպէս՝ Եւրոպայի տարբեր ժողովուրդներուն արուեստները:

Առայժմ անուշի ոչ մէկ վաճառատուն կամ հաւաքածոյ պահուցող ղեկավար մը ունի: Աւելին՝ իրանեան աշխարհէն (գլխաւորաբար իրանէն եւ Աֆղանիստանէն) եւ արաբական երկիրներէն (արեւմտեան Իրաք, Սուրիա, Պաղեստին, Յորդանան եւ Եգիպտոս) կանուխ ժամանակներու արուեստի գործերուն մեծ մասը, ինչպէս՝ խեցեղէն եւ մասնաբաժար պրոնզէ իրեր, յայտնաբերուած են ծածուկ պեղումներու ընթացքին: Եփոթը կ'աւելնայ, երբ տարօրինակ եւ արօտ տեղեկութիւններ կը կցուին իրերու պատկանելիութեան պատմութեան:

Յստակ է, որ անուշի Քրիսթի'զ վաճառատան մէջ ցուցադրուող 4 թասերը կու գան արեւելեան իրանի Նէշապուրի շրջանէն: Անիցմէ մէկը ցանկագրուած է իրեն «հիւսիսարեւելեան Պարսկաստանի Նիշապուրի շրջանէն» բերուած իր, ուրիշ մը՝ «հիւսիսարեւելեան իրանէն», իսկ միւս երկուքը՝ «կեդրոնական Ասիոյ Սամարղանտ քաղաքէն»: Չորս թասերէն միայն մէկը վաճառուեցաւ, թէ՛ եւ երկու այլ թասեր նոյնքան լաւ էին:

Քամահանքէ մղուած այս մօտեցումը կրկնուեցաւ Քրիսթի'զի գրեթէ ամբողջ անուշի ընթացքին եւ նոյնը պիտի պատահէր բոլոր միւս անուշիներուն պարագային: Երբ իրերու պատկանելիութիւնը հաստատող տեղեկութիւնները անբաւարար են, անոնց գիները հակակշիռէ եւ տրամաբանութեանէ դուրս կը մնան: Տուեալ պայմաններուն մէջ վաճառքը լաւ էր, որքան որ կարելի էր: Անուշի գրուած էին արեւու տակ թրծուած կաւէ 296 իրեր: 177 իրեր գտան գիրենք հիւրընկալող անկիւն մը եւ արձանագրեցին շուրջ 4 միլիոն տոլարի վաճառք մը: Չարմանալի չէ, որ յաջող կերպով վաճառուեցան այն իրերը, որոնց պատկանելիութիւնը նուազագոյն հարցերը կը յարուցէր:

Բարձրագոյն գինը վաճառուեցաւ արաբական գեղագիր տառերով փորագրուած պղինձէ եռտասնիկ մը, որուն փորագրութիւնները ժամանակին արժանով լեցուած էին: Արձանագրութիւնը կու տայ անունը եւ տիտղոսները 13րդ դարու վերջերուն ապրած սուրիացի բարձրաստիճան անձի մը: Եռտասնիկ պատկանած էր արուեստի գործերու հռչակաւոր պարսիկ առեւտրական Նալի Հիրաւանէքի, ապա ժոռան Փալեւքի գայն գնած էր իր հաւաքածոյին համար եւ 1973ին նուիրած էր Լոս Անճելըսի Արուեստի թանգարանին:

Եռտասնիկ անուշի գրուած է «ապագային այլ իրեր գնելու համար»: Սակայն խորհրդադարու դար մնայ, թէ՛ թանգարանին պատասխանատուները ինչո՞ւ կը վաճառէին նման կարեւորութիւն ներկայացնող պատմական իր մը, որ 127,650 փաունտ ապահովեց հաստատութեան:

Թանգարանին բացատրութիւնը աւելի կը ծառայէ վաւերագրութեան, քան թէ՛ գեղարուեստական հետաքրքրութիւն մը գոհացնելու: Վստահաբար անիկա ի գօրու չէ վաճառուած միւս գործերուն պարագային:

Իրանէն յայտնաբերուած կաւէ սեւ թաս մը բոլորովին անվնաս գոյատեւած է, ինչ որ հազարէկ է պեղումներէ յայտնաբերուած թասերու պարագային: Պաղեղի գոյնով (թիւրքուազ) վարդածե գարդի կրող 13րդ դարու այս թասը վաճառուեցաւ 9560 փաունտի: 12րդ դարու իրանէն այլ թաս մը, կապոյտ ջնարակով պատուած գեղեցիկ գարդանմուշներով, վաճառուեցաւ 897,250 փաունտի: Այս երկուքը թանգարանի մէջ ցուցադրութեան արժա-

նի բարձրորակ իրեր են: Նոյնքան թանկարժէք է ոճաւորուած թուղունի մը պատկերը կրող եւ ոսկեգոյն փայլքով հրաշալի այն թասը, որուն պատկանելիութիւնը բնորոշուած է իրբեւ «Աբբասեան, հաւանաբար՝ Սամարայէն», որ կը գտնուի այսօրուան Իրաքի մէջ, սակայն կը կրէ 10րդ դարու իրանեան արուեստի յատկանիշներ: Քոփենհագենի մէջ Տէյվիտ թանգարանը, որուն հաւաքածոն կը պարունակէ Իրանէն, Իրաքէն եւ Սուրիայէն արժէքաւոր իրեր, գայն գնեց 32,265 փաունտի:

Առեղծուածային այլ վաճառքներ յաջողեցին: 13րդ դարու գունազեղ տեսարաններով յատկանշական թասեր, որոնք նկարները հրատարակուած են 1939ին լոյս տեսած «Պարսկական արուեստի քաղուածք» վերնագիրով կոթողային գիրքի մը մէջ, վաճառուեցան նոյն ձեւով: Անոնց գիները՝ 31,070 փաունտ եւ 13,145 փաունտ, կը թուի, թէ չեն արդարացրել իր թանկարժէք իրի մը կտրուկը:

Երբ անուշի եւ առաջնորդող դեր ստանձնած թանգարաններ փոփոխամիտ կեցուածք կը ցուցաբերեն իրենց նախասիրութիւններուն մէջ, զարմանալի չէ, որ կը պակսին սեփական հաւաքածոյ պահող այն գնորդները, որոնք յետին նպատակներ չեն հետապնդեր: Արեւելքէն թէ՛ Արեւմուտքէն կանուխ ժամանակներու արուեստի եզակի գործերը պարզապէս մատի վրայ կը համրուին:

Այս երեւոյթին պատճառը մասամբ արուեստի գործերու անորոշ պատկանելիութիւնը եւ անոնց վաւերականութեան վերաբերող հարցերն են: Արեւելքի երկիրներուն մէջ առեւտրական նպատակներով պեղումները արգելուած են, իսկ ապագային հասուցումներու պահանջի հաւանական հարցերը մտաւախութիւն կը պատճառեն եւ իրենց դերը ունին իրերու պատկանելիութեան անորոշ բնորոշումներուն մէջ: Սակայն գլխաւոր պատճառը տեսողական չփոթն է. արուեստի գործի մը գեղագիտական արժէքը հասկնալու դժուարութիւնը:

Ճանաչողութիւնը եւ տեսողական ըմբռնումի կայունութիւնը բոլորովին տարբեր անդրադարձներ կ'ունենան: Ասիկա ակներեւ էր Քրիսթի'զ վաճառատան կողմէ յաջողութեամբ վաճառուած 16րդ եւ 17րդ դարերու օսմանեան խեցեղէն հաւաքածոյի մը պարագային, որ կը պատկանէր Նիւ Եորքի մէջ Լուի Պաուէնի կայուածին: Յայտնի չէ, թէ օսմանեան բազմազգեան ընկերութեան մէջ ո՞ր բրուտագործները շինած են գանոնք, սակայն հնա-



Առիւծի արձանիկ մը վաճառուեցաւ 1,54 միլիոն փաունտի եւ կտրուց մրցանիշ մը

գիտական եւ վաւերագրական ապացոյցներ ցոյց կու տան, թէ անոնց գլխաւոր աղբիւրը իգնիքն է, իսկ իրերուն շինութեան թուականը ճշգրիտ նուազ խնդրայարոյց է:

Սեցեղէն այս իրերուն գիները շատ սուղ էին: Հակառակ տեսանելի կոտորածներու, ինչ որ սովորաբար անընդունելի է գետնին տակ չթաղուած բրուտագործական իրերու պարագային, 1530ական տարիներուն շինուած մեծ ամանի մը գինը մագլցեցաւ մինչեւ 85,850 փաունտի: 1570ական կամ 1580ական տարիներուն հետաքրքրական զարդանմուշներու մէկտեղումով շինուած կապոյտով ճերմակ թասի մը գինը հասաւ մինչեւ 105,650 փաունտի:

Թուականի եւ պատկանելիութեան նմանօրինակ վաւերական տուեալներ օգնեցին, որ 13րդ դարու Անատոլիոյ պղինձի մէջ կոփուած արձանի մը գարգառնողակներով իրի մը գինը մինչեւ երկուք բարձրանայ Սոթի'զի մէջ Հոկտեմբեր 16ին կայացած անուշի ընթացքին, ինչպէս նաեւ յաջող օր՝ Պոնճամգի մէջ:

Իսլամական փառատօնի մը գուզահեռ 1976ին վերթորիս էնտ Ալլըրթ թանգարանին մէջ մետաղագործութեան փորձիկ նմուշի մը ցուցադրութեան առիթով մասնանշած էի, թէ շարք մը մոմակալներ, որոնք նախապէս իրանեան կը համարուէին, կու գային թրքական դամբարաններէ: Մանաւանդ՝ որովհետեւ կարելի էր ճշգրիտ անոնց պատկանելիութեան վերջին վայրը: Անոնցմէ ոմանք կը պատկերէին այնպիսի տարագներ, որոնց գուզահեռները

ԾԻԾԱՂ, ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, ՎԵՐԱՊՐՈՒՄ

ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ ՐԱՍՏԱՌԵՍ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՕՓԵՐԱՅԻ ՆՈՐ ՄՐՅՈՒՄ ՍԸ ԿԸ ՆԵՐԳՐԱԷ ԱԵԼԻ ԲԱՆ 200 ԵՐԱԺԻՇՆԵՐ: «ՏԻ ԷՔՆՈՍՄԻՍԹ» ԿԸ ԳՐԷ:

Երաժշտութիւնը յօրինող դանդաղ եւ անյազուրդ ձգող աշխատանք մըն է: Ի տարբերութիւն գրագէտներու, երաժիշտներ յաճախ կանխաւ չեն վճարուի օֆերա կամ համանուագ յօրինելու համար: Հետեւաբար, երբ բրիտանական բարեսիրական նոր կազմակերպութիւն մը՝ «Ճեմըսիս Ֆաունտէյշըն» 2000ի վերջնադրութեան համացանցի վրայ ծանուցեց սենեկային օֆերայի մրցումը, գարմանայի չէր, որ աւելի քան 200 դիմում ստացաւ մինչեւ հեռաւոր Ուէրանիայէն եւ Արժանիքին:

«Ճեմըսիս Ֆաունտէյշըն»ի հիմնադիրներէն Ճոն Սթրուինքի Ամերիկեան «Մոլլըն Սթըյնլի» միջկազմային ընկերութեան փոխ նախագահն է եւ կը ղեկավարէ դրամատուն մը: Ան կը սիրէ մեծ իրագործումները: Բրիտանական թէյթ Մատուց թանգարանին եւ Ռոյլըլ Բոթթ Թիէթրի աշխուժ պաշտպաններէն՝ Սթրուինքի նոր օֆերաներու սիրահար մըն է: «Միշտ կը գարմանամ, թէ ինչո՞ւ աւելի մեծ թիւնով օֆերաներ չեն յօրինուիր», կ'ըսէ ան: Հռոմէական կաթոլիկ եկեղեցւոյ պատկանող այս անձը երաժիշտ Ռոքսանա Փանուֆիքի ապսպրած է «Ուեսթմիսթըր պատարագը» վերջերս մահացած կարտինալ Պասիլ Հիւմի 75րդ տարեդարձին առիթով: Սակայն «Ճեմըսիս»ի մրցումին անոր նուիրումը ցարդ մեծագոյնն է: Անոր նպատակն է քաղաքի երիտասարդ արուեստագէտները, որոնք այսպէս պիտի զարդին երաժշտութիւն յօրինելէ, ինչպէս նաեւ՝ «երաժիշտներու եւ օֆերայի բառեր գրողներու աշխարհին մէջ գտնել թարմ ու երիտասարդ տաղանդներ, որպէսզի անոնք արտադրեն սենեկային օֆերայի նոր տարբերակ մը, ինչ որ կրնայ աւելի մեծ թիւնով հանրապետներ ներգրաւել աշխարհի տարածքին», կը բացատրէ ան:

Այժմ մրցանքներ ներկայացուած 200 գործերէն ընտրուած են 9 ստեղծագործութիւններ: Հեղինակներուն փոքր գումար մը տրուած է իրենց ներկայացուցած օֆերաները կատարելագործելու համար: Թեկնածուները վերջերս Լոնտոնի մէջ ներկայացուցած են ցարդ կատարած իրենց աշխատանքին արդիւնքը: Պահանջը

լաւ էր, որ իւրաքանչիւր գործ ինքնին ամբողջական ըլլար 20 վայրկեան տեսողութեամբ բեմագրութեան մը համար: Անիկա պէտք էր պարունակէր բաւարար երաժշտութիւն եւ բառեր, 8 ձայներու համար գրուած արիւններ եւ սենեկային նուագախումբի մը յարմար երաժշտութիւն: Լոնտոնի «Ալմայտա» թատերասահին մէջ ներկայացուած փոքր կտորներ սովորական փորձ մը աւելի յղուած էին եւ հանդիսատեսներուն պարզեցեցին երաժշտական թատրոնի մը ստեղծումին գործընթացը տեսնելու հազուադէպ առիթ մը:

Ներկայացուած գործերուն նիւթերը այլազան էին: Անոնք կ'ընդգրկէին ամերիկեան բացօթեայ շարժապատկերի աւանդութիւնը, ճարտարական փոքր հաւաքակառուցեան մը մէջ փրկու ծեր կեռասնիներ կտրելու պատճառով ծագած լարուածութիւնը, իտալացի քաղաքական դէմք Ալտո Մորոյի առեւտրական միւս պատկանութեան առիթով լրագրողի մը հետագօտած հակասական հակազդեցութիւններ:

Այս գործերը երաժշտական եւ պատմողաչառ յանդուրան էին: Ոմանց մէջ երաժշտութիւնը կը պայքարէր գերակշռող բառերուն դէմ կամ հակառակը: Ոմանք շատ բարդ էին բեմագրութեան համար: Սակայն ստորեւ նկատագրուած երեք գործերը, որոնք մրցանակի արժանացան, օժտուած էին հասարակաց այն ինքնապատահութեամբ, թէ այլ կերպ կարելի չէր պատմել մատուցուած նիւթը:

«Սայրուս աճ ըրր» օֆերան երգիծական ոճով կը պատկերէ ապագայի տարբերակ մը արագ կշռոյթով եւ կատակերգական այս օֆերային հեղինակն է քանատայի երաժիշտ Փօլ Ֆրեհնըր: Բառերը կը պատկանին Անճելա Սըրֆի:

Երկրորդ գործը՝ «Տի իբընիթի մէն» կը պատմէ մարդու մը մասին, որ հրաժարած է ոգիւնը ըմպելիի գործածութեանէն եւ կրօնական երազներով կ'ապրի: Ան 1950ական տարիներուն իր ժամանակին մեծ մասը կ'անցընէ Սիտնիի փողոցներուն մէջ՝ մաքուր գիրով «Իբընիթի» (յաւիտենութիւն) բառը գրելով

կարելի է տեսնել հակական արուեստին մէջ: Մոմակալներէն մէկը ստորագրուած է քառեակով մը, որուն ոճը կը յիշեցնէր անուանի խորհրդապաշտ ժալալատտին Ռուսիի գրութիւնները: Ռուսի, որ Արեւելքի մէջ ծանօթ է Մաուլանա, Մեւլանա, Մաուլաուի անուններով, ապաստան գտած էր Քոնիալի մէջ, ինչ որ զիս մղեց առաջնորդելու այն կարծիքը, թէ մոմակալը շինուած էր այս քաղաքին մէջ:

Սոթի'զի մէջ վաճառքի դրուած գինիի փարչ մը՝ ծաղկած բոյսերու ընդելուզուած շարքերով, վաճառուեցաւ 71,700 փաունտի: Գայն գնող հաստատութիւնը նախընտրեց անանուն մնայ: Պոնճամգի մէջ նոյն հազուադէպ զարդարանքով մոմակալի մը գինը մագլցեցաւ 62 հազար փաունտի, երբ Լոնտոնէն արուեստի վաճառական մը ծայրագոյն արեւելեան թանգարանէ մը աւելի բարձր գին վճարեց: Աճուրդը խելացի կերպով կազմակերպուած էր եւ ընդհանրապէս յաջող ընթացաւ, ինչ որ յաւելեալ խանդավառութիւն ստեղծեց: Սակայն ճիշդ չէ վիճել, թէ անուշի դրուած իրերուն յստակ պատկանելիութիւնը բաւարար է յաջող վաճառքի մը համար: Անցեալ շարժուան անուշիներուն ընթացքին ծախուած ամէնէն խորհրդաւոր իրը ի յայտ եկաւ Սոթի'զի մէջ: Առիւծի արձանիկ մը, որուն բերանին ջուր կը ցայտէր, աքոտ կերպով վերագրուած էր հարաւային իտալիոյ, սակայն անոր պատկանելիութիւնը վիճելի էր, որովհետեւ արձանիկը կը կրէր արաբերէն բոփանդականութեամբ գեղագիր արձանագրութիւն մը, ինչ որ մտածել կու տայ Միջին Արեւելքի մասին: Քանգակին խոյաններէն ցայտող բոյսերը իրանեան արուեստի երեւոյթ են, իսկ առիւծին քանդակային յղացքը իւրայատուկ է:

Արձանիկին ակունքը պէտք է փնտռել արեւելեան Միջերկրականի մէջ, թերեւս Իրաքի: Չայն գնելու պատրաստ երկու մրցակիցները հայանաբար պիտի ուզէին մտածել ստեղծուածին մասին: Հեռաձայնով անոնց մրցակցութիւնը վերջ գտաւ խելացի գինի մը առաջարկով, որ աշխարհի մրցանիշը կտորեց Մեքաւոր Արեւելքէն գազանի մը պատկերով փոքր քանդակի մը համար: Այսպէս, առիւծի արձանիկը վաճառուեցաւ 1,54 միլիոն փաունտի, նախատեսուած գինէն 5 անգամ աւելի:

Երեւոյթը այնքան ալ վատ չէ այնպիսի մարզի մը մէջ, որ անորոշութեան կը տառապի, սակայն յաւելեալ փաստ մըն է անոր բոլորովին աննախատեսելի բնոյթին:

Ամէնէն ուշագրաւ գործը՝ «Թուայթ»ը Ռապլիի ոճով երաժշտական թատերախաղ մը, կը պատկանի խոստանալիք երիտասարդ թատերագիր Սայմըն Տոյլի, իսկ երաժիշտը՝ Եուրկէն Միմփսըն տիրական դէմքերէն է Տապիլինի ընդյատակեայ երաժշտական կեանքին: Հրեական Ողջակիզումէն ետք մուսլայ աշխարհի մը մէջ տեղադրուած տիպարները կը թուի, թէ կու գան ոչ մէկ տեղ եւ կը յայտարարեն իրենց ինքնութիւնը, կարիքներն ու ցանկութիւնները: Հակառակ մթնոթեան, բնագիրը կը պարունակէ սրամտութիւն եւ գուրթ պահեր: Երաժշտութեան, տիպարներու եւ բառերական է, որ անոնց ստեղծած աշխարհը համոզիչ կը թուի հանդիսատեսին:

«Ճեմըսիս» մրցումը հազուադէպ իրագործութիւն է կատարողական արուեստներու աշխարհին մէջ: Անիկա միակն է, որ որոշ վճարուած կը կատարէ երաժշտական գործ մը կատարելագործելու եւ բեմագրելու համար: Օֆերայի թատրոն է, ոչ ալ երաժշտախառն թատերախաղ, այլ՝ թատերական գաղափար մը, որուն մէջ կը թուի, թէ խագներ ու բառերը իրարմէ կը ծնին: Վերոյիշեալ 3 օֆերաները «Ալմայտա» թատերասրահին մէջ պիտի բեմագրուին 2003ի Յուլիսին:

(ՅԱ.ՊԱՒՈՒԱԾ)

Պատրաստեց՝
Լ. ԿԻՒՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ԶՕՐԱՎԱՐ ԴՐՈՅԻ...

Շարունակում՝ 4րդ էջէն

Պանդխտութեան մէջ կեանքի վերջին տարիները անցուցած մեծ հայրենասէրի անկողնում կամքին եւ անհուն կարօտին մասին խօսեցաւ երրորդ բանակալին զօրաբաժինի հրամանատար զօր. Արշալոյս Փայտեան եւ հպարտութեամբ յայտնեց, թէ զօրաբաժինի երրորդ գունդը անուանակոչուեցաւ զօրավար Դրոյի անունով:

Երիտասարդ սերունդին 1918ի հերոսամարտերու պատմութիւնը ուսումնասիրելու եւ Դրոյի ոգիով դաստիարակուելու կոչ ըրաւ արձակագիր Զօրի Բալայան:

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ, Ազգային Ժողովի պատգամաւոր Արմէն Ռուստամեանի խօսքերով՝ Դրոյի կեանքին իւրաքանչիւր ակնթարթը կապուած է իր հայրենիքին ու Ժողովուրդին հետ, եւ «անսահման հայրենասիրութիւնը անոր կ'օգնէր երբեք չսխալի վճռորոշ պահերուն»:

Ողջոյնի խօսք ուղղեցին նաեւ «Իգիթ» Հայրենակցական Միութեան անդամներ եւ Արագածոտնի թեմի առաջնորդ Բագրատ վրդ. Գալստեան:

www.lemagan.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՊԵՏՐՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ մահուան 100-ամեակի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Զալբալի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ԶԱՊԷԼ ԹԱԹԱՐԵԱՆԻ մահուան քառասունցիկ առիթով, եւ ԼՈՒՍԻԱ ԹԱԹԱՐԵԱՆԻ, ՄԻՍԱԶ ԳԱՍՈՅԵԱՆԻ եւ ՖԱԼԹԷ ԳԱՍՈՅԵԱՆԻ մահուանց յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Նոր Մարաշի Սրբոց Զատասցի Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԱԹԵԼԻԿ ԿԱՆԻՄԵԱՆԻ մահուան քառասունցիկ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԵՐԺԻՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան քառասունցիկ առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 3 Նոյեմբեր 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5289 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

11x11 grid with numbers 1-11 and a pattern of black squares.

Table with 2 columns: ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ and ՈՒՂԱՆԱՅԵԱՅ. Contains 11 numbered items.

ԹԻՒ 5288

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

11x11 grid with numbers 1-11 and a pattern of black squares.

Advertisement for www.hamazkayin.com featuring a woman and text about online services.

www.hamazkayin.com

ՍԱԿԱՐԱՆ

Table listing various services and prices, including phone numbers and addresses.

Table listing services like 'ՈՍԿԻ' and 'ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ', including prices and contact info.

Table with 3 columns: Ա. կարգ, Բ. կարգ, and numerical values.

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

Series of horoscope-like predictions for different days of the week, starting with 'Նոյեմբերի 21 Մարտին'.

ՕՐԱՏԵՏՐ

ԶԲՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ՓԱՌԱՏՕՐ

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ ՊԱՐԳԵՒԵԼ



Ուալիտ Հարության

Աշնանային փառատօնին նախորդ երոթներուն խանդավառ ընթացքը ցոյց կու տայ, որ լիբանանցիին համար գրաւիչ գաղափար է աշնան մշակութային ոչ այնքան նոր ու նշանակալիք երաժշտական պահեր պարգևատրելու:

Եան ժամը 8:00ին, այս անգամ Թրիֆոլիի հնամենայ «Նաուֆալ» պալատին մէջ: Երկու հազարը անուր տեղի ունենալիք այս երաժշտական երեկոն կը ներկայացնէ լիբանանցի դաշնակահար Ուալիտ Հարության: Անոր մեկնարկը յայտնագիրը պիտի ընդգրկէ Պեթրոս Կիսիկի «Մեծ Մուսա»-ն, Մեծ Մուսայի «Մեծ Մուսա»-ն, Վերջինիս «Մեծ Մուսա»-ն, Վերջինիս «Մեծ Մուսա»-ն, Վերջինիս «Մեծ Մուսա»-ն, Վերջինիս «Մեծ Մուսա»-ն:

Աշնանային փառատօնը, ելոյթ կ'ունենայ Ուալիտ Հարությանի (դաշնակ), երեկոյեան ժամը 8:00ից, Թրիֆոլիի «Նաուֆալ» պալատին մէջ: Գործերու եւ ծածկոցներու ցուցահանդէս, մինչև 10 Նոյեմբեր, «Ճորձումը Պէյրութին» մէջ: «Շէ մուս, շէ թուս», լիբանանցի եւ երոպացի արեւմտագետներու գործերու ցուցադրութիւն, քաղաքամէջի «Ազգարիչ» շէնք, մինչև 9 Նոյեմբեր: Ցուցահանդէս «Մեզոն սիւ վերթիւ», Անթիլիասի կը ներկայացնէ իր գեղանկարները ու արուեստի գեղեցիկները, «Նաուֆալ» մէջ, ժամէջ: «Միսկա 1860-1861», Օսման Բոսնիայի գեղանկարներու ցուցահանդէս, «Սրբոց» քաղաքում, մինչև 15 Նոյեմբեր:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

Table with TV and radio program schedules, including times and channel names.

Table with radio program schedules, including times and station names.


ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՀԱՅ ՄԸ Կ'ԻՍԼԱՄԱՆԱՅ ԻԶՄԻՐԻ ՄԷՋ

Իզմիլի 24 Հոկտեմբեր թուականով կը հեռագրեն Պոլսոյ թերթերուն: Սվագի հայ խաչատուր, որ վերջերս Քրեայէն վերագործած քրքրական միութեան գինուրդներէն էր, երկու օր առաջ շահագրգռող իշխանութեան դիմելով յայտնեց, որ կ'ուզէ իսլամանալ: Խաչատուրը այսօր միւլիթիոնի մէջ երթալով անհրաժեշտ կրօնական արարողութիւնը կատարել տուաւ եւ իսլամանալ է ետք Սալիհ Պեքրի անունը դրաւ: Սալիհ իսլամ կ'ընէ մը հետ ամուսնացած է եւ Ռամանտան անուանով գաւակ մը ունի: Սալիհ Պեքրի հետեւեալը յայտարարեց: - Երկարատեմէ կ'ընէ կը մտածէ իսլամանալ: Բայց հայրենասիրական պարտականութեան ընդունով Քրեայ մեկնումս արգելի հանգիստացաւ: Կարծիքներուն դէմ մարտնչելով յարգական երկիր վերադառնալ է ետք, առաջին գործը եղաւ իսլամութեան ձեռնարկը: 30ամեայ սեւ մօրուրով բոկոտն «Քրիստոս» գրատակարարութեան ղրկուեցաւ իրբեմ մտային անհաւասարակչոն:

ԿԵՂԾ ՔՐԻՍՏՈՍ ԱՐ Անգարայէ կը հեռագրեն: Առանց արտօնութեան սահմանը անցած սուրիացի արար մը զինք հարցաքննող զինուորական ատենակարան անցնելու հետեւեալ յայտարարեց: «Ես Մարմինի եւ Յոգեւորի գաւակը Քրիստոս, Երկար յիստորիկ անցնելու քրիստոնէութեան նուիրակ հոգեբերը: 30ամեայ սեւ մօրուրով բոկոտն «Քրիստոս» գրատակարարութեան ղրկուեցաւ իրբեմ մտային անհաւասարակչոն:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՃԱՏՐԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ՌՈՒՄԱՆԻԱՅԵՆ

Սյուվենիոյ Պլես քաղաքին մէջ տեղի ունեցող ճատրակի 35րդ Ռդիմպիական մրցումներուն 6րդ հանգրուանին, երէկ Հայաստանի տղոց հաւաքականը 2.5 - 1.5 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ռուսաստանին:

6րդ հանգրուանի մրցումներէն ետք, Ռուսիա 18.5 կէտով կը գրաւէ տղոց պարագլուխի դիրքը, իսկ 2րդ դիրքին վրայ կը գտնուին Ռուսաստանի եւ Լեհաստան՝ 17ական կէտով:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԿԱՐԳ ՄԸ ՄԵԾԵՐ ՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ՍԿՍԱՆ ԵՂԱՆԱԿԸ

ԷՆ. ՊԻ. ԷՅ. Էրկրորդ օրուան մրցումներուն երէկ տեղի ունեցան 14 հանդիպումներ, որոնց ընթացքին արձանագրուեցան անակնկալներ, երբ կարգ մը անուններ խումբեր, պարտութեամբ սկսան 2002-2003 եղանակը:

Պոսթի մէջ, Սելիթիս 99-96 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Շիքաօ Պուլյէն, հակառակ մարտի, որ Սելիթիսի մարզիկ Փոլ Փիրս նշանակեց 28 կէտ, իսկ անոր խմբակից Թոմի Տէլք 23 կէտ: Պուլյի մարզիկներէն ձեռք բերեց 21 կէտ եւ 12 խփար:

Փորթլէնտի մէջ, Թրէյլ Պլէյլըր 102-90 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Լոս Անձելըս Լէյքըրսը, որ իր կատարած առաջին մրցումին ալ պարտութիւն կրած էր (բացման օրը):

Յաղթական կազմին մարզիկներէն՝ Ռաշիտ Ուալաի նշանակած 28 կէտերուն դիմաց, թէեւ Լէյքըրսի մարզիկ Քոպլի Պրայնթ նշանակեց 25 կէտ եւ 10 շիպաուտ, սակայն անգամ մը եւս Վալաի էր Շաքիլ Օնիլի բացակայութիւնը (վիրաւոր):

Սան Անթոնիո Սփրիդ եւս կրեց եղանակի իր առաջին պարտութիւնը՝ Կոլորադո Սթըյթ Ուորիորսը 106-98 արդիւնքով: Իր կատարած առաջին մրցումին Սփրիդ պարտութեան մատնած էր Լէյքըրսը:

ԷՆ. ՊԻ. ԷՅ. պատմութեան կարկառուն դէմքերէն Մայքըլ Ճորտըն պարտութեամբ սկսաւ եղանակը, երբ անոր կազմը 74-68 արդիւնքով պարտութիւն մը կրեց Թորոնթո Ռեփթորսընէն, այս վերջինին դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին:

Ճորտըն, որ յանուշիկայ Փետրուարին պիտի թեւակոխէ 40 տարիքը, կրցաւ նշանակել միայն 8 կէտ: Ռեփթորսի մարզիկներէն Մորիս Փէթրարն նշանակեց 19 կէտ եւ 10 շիպաուտ, իսկ անոր խմբակից Վինս Քարթըր՝ 18 կէտ:

Ֆիլադելֆիայի մէջ, Սիքսթըրս միայն երկու կէտի տարբերութեամբ լաջողեցաւ պարտութեան մատնել իր հիւրը՝ Միլուոքի Պաքըր (95-93):

ՀԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ՝ «ՍԱՐԴԱՐԱՊՊՍ» ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՋ

ԱՅՍՕՐ՝ Ը.Մ.Ը.Մ. - ԸԵՐՐԻԷ ՄԱԺՏԱԼ ԱՅՆՃԱՐ ՖՈՒԹՊՈԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԸԱՆԴԻՊՈՒՄ

Երէկ երեկոյեան «Սարդարապատ» ակումբին մէջ տեղի ունեցաւ Հանդիպում մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայոլի խումբին համակիրներուն եւ յանձնախումբին միջեւ:

Զրոյց - հանդիպումին ներկայ չկրցաւ գտնուել խումբին մարզիչը՝ Վաչէ Սարգիսեան, որ Լիրանահի ֆուլթայոլի ֆետերատիոնին հետ ունէր յատուկ հանդիպում մը՝ լիրանահի քաղաքի ակումբներուն մարզիչներուն կողմէն:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները ընդառաջեցին այս հանդիպումին եւ ներկայ գտնուելով կրցան որոշ գաղափար մը ունենալ խումբին աշխատանքներուն մասին:

Ֆուլթայոլի յանձնախումբը մասնաւորաբար շեշտը դրաւ խումբին ամէն գնով նեցուկ կանգնելու անհրաժեշտութեան վրայ, որպէսզի անհիկա դարձեալ բարձրանայ Ա. դասակարգ: Կարեւորութեամբ շեշտուեցաւ այն ողջունելի երեւոյթը, որ մարզիչ - մարզիկ փոխարարբերութիւնները կը գտնուին լաւագոյն մակարդակի վրայ:

Այս զրոյց - հանդիպումը տեղի ունեցաւ Լիրանահի ֆուլթայոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 2002-2003 եղանակի բացման մրցումէն



Ֆուլթայոլի յանձնախումբը կը պատասխանէ համակիրներուն հարցումներուն



Ներկայ համակիրներէն մաս մը

ճիշդ օր մը առաջ, նկատուեցաւ, որ աչտօր տեղի կ'ունենայ Ա. հանգրուանի բացման մրցումը՝ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հըրրիէ Մաթոյայ Այնճարի միջեւ: Մրցումը տեղի կ'ունենայ Պուրճ Համուտի Քաղաքացիական դաշտին վրայ, ժամը 2:30ին:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն կը սպասուի առաջին իսկ մրցումէն ներկայ ըլլալ դաշտ եւ քաջալերել խումբը: Ա. հանգրուանի մնացեալ վեց մրցումներէն երեքը տեղի կ'ունենան վաղը, իսկ մնացեալ երեքը՝ Կիրակի օր:

ԹԵՆԻՍ. ՓԱՐԻՉԻ ՄՐՑԱՇԱՐՔ

ԱԿԱՄԻ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

Փարիսի մէջ երէկ շարունակուեցան տղոց թենիսի Մասթրի մրցաշարքի 4. հանգրուանի մրցումները:

Ամերիկացի Անտրէ Ակաի յաջողեցաւ ապահովել քառորդ աւարտականին իր տունը, հակառակ որ շուէտացի Թոմաս Ենհանսընի դէմ իր կատարած մրցումին առաջին սեթին պարտուեցաւ: 2րդ դասուած 32 տարեկան Ակաի մրցումը աւարտեց 6-7, 6-4 եւ 6-3 արդիւնքով:

Ամերիկացին, որ միակ մարզիկն ըլլալով յոյս ունի գրաւելու տղոց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, ոչ մէկ ճիգ պիտի խնայէ Լէյթըն <ուիթթէն իլելու առաջնութիւնը:

Իր կարգին, Հուիթ (դասուած՝ թիւ 1) ապահովեց քառորդ աւարտականին իր տունը, 6-2 եւ 7-6 արդիւնքով պարտութեան մատնելով Երգենի Քաֆելիիքովը (Ռուսիա):

Բրիտանացի Թիմ Հենման (դասուած՝ 6րդ), որ մեծ յոյսեր ունէր Մասթրիի բացման մրցաշարքին իր մասնակցութիւնը բերելու, այդ յոյսերը

կորսնցուց, երբ 6-4 եւ 6-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ֆրանսացի Նիքոլա Էպիտէնէն:

16րդ դասուած արժանաբանի Կիլերմո Քանաս դուրս մնաց մրցաշարքէն, երբ 6-1 եւ 6-4 արդիւնքով պարտութիւն մը կրեց

Փարատորն Սրիշափանէն (Թայլանդ): Նշենք, թէ Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, արժանաբանի Դաւիթ Նալպանտեան 6-3 եւ 6-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց 3րդ դասուած ռուս Մալախովսկիին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ՄԵԼԳՈՆ ԷՂԻՂԱԹԵԱՆ

ԲԱՌԵՐՈՒ
ԿԱՆԱՐԴԱՆՔԸ

Կրնաք ստանալ
Համազգային գրախանութն,
գրատուններ ՆԱՐԵԿԱՅԻՆԵ ԵՎ ՈՍԿԵՂԱՐԵՆ

ԶԵՄՓԻԸՆՁ ԼԻԿ

Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԳՐԵԹԷ ՀԱՍԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԱԽՐՏԻՆ

«Զէմփիրնայ Լիկ»ի մրցաշարքի Ա. հանգրուանի մրցումները գրեթէ հասած են իրենց աւարտին, նկատի ունենալով, որ մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերող 32 խումբերը տակաւին մէկական մրցում ունին կատարելիք, բացի Սպարտակ Մոսկուայէն եւ Պալէն, որոնք երկուքական մրցում ունին:

Յարդ տեղի ունեցած մրցումներէն Պարսելոնա կը հանդիսանայ միակ խումբը, որ իր կատարած հինգ մրցումներուն ալ յաղթանակներ արձանագրած է, ապահովելով առաւելագոյն 15 կէտերը եւ բնականաբար՝ Բ. հանգրուանի տունը, առանց սպասելու Կալաթասարայի դէմ իր կատարելիք մրցումին:

Մինչ Պարսելոնայի արձանագրած արդիւնքները Սպանիոյ ախոյեանութեան մրցումներուն կը մնան ոչ համոզիչ, անհիկա այս մրցաշարքին ցարդ կը մնայ լաւագոյնը:

Անոր ճիշդ հակապատկերը կը պարզէ Պալէն Միւնիխ, որ կը գրաւէ Պունտալիկայի պարագլուխի դիրքը, սակայն Ա. հանգրուանին իսկ անոր դուրս մնալը եղաւ բաւական անօթալի, նկատի ունենալով, որ անհիկա նոյնիսկ յաղթանակ մը չկրցաւ արձանագրել, թէեւ տակաւին Լանսի դէմ մրցում մը ունի կատարելիք: Նոյնիսկ եթէ անհիկա այդ մրցումին յաղթանակ մը արձանագրէ՝ պիտի վարենալ Եու. Է. Էֆ. Ա.ի մրցաշարքին տուն մը ապահովել: Նշենք, թէ իւրաքանչիւր խմբակի երրորդ դիրքերը գրաւող խումբերը կը մասնակցին Եու. Է. Էֆ. Ա.ի մրցաշարքին:

Նոյեմբեր 12ին եւ 13ին տեղի ունենալիք դարձի վերջին մրցումները պիտի ըլլան ճակատագրական, մասնաւորապէս խումբերուն համար, որոնք կը պայքարին ամէն գնով Բ. հանգրուանին տուն մը ապահովելու:

Ուշագրաւ եղաւ Ա. Էս. Ռոմայի արձանագրած յաղթանակը՝ «Սանթիակո Պէրոնապէօ»ի մէջ, ուր անհիկա 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռեյալ Մատրիդը: Մարզիչ Ֆապիո Քափելլոյի կազմին արձանագրած յաղթանակը եղաւ պատմական, նկատի ունենալով, որ 1967էն ի վեր իտալական խումբ մը յաղթական չէր կրցած վերադառնալ հունկէ: Վերջին յաղթականը եղած էր Ինթեր Միլան:

Ստորեւ՝ Ա. հանգրուանի դարձի վերջին ճակատումներուն յայտագիրը, որոնք պիտի ըլլան բաւական տաք եւ հետաքրքրական մրցումներ:

ԵՐԵՎԱՆԻ, 12 ՆՈՅՆԵՐԵՐ
●Ա. ՌՄԲԱԿ
Օքսէն - Պորուսիա Տորթմունտ
Արսենալ - Փ. Ս. Վ. Այնտհոլմըն
●Բ. ՌՄԲԱԿ
Վալենսիա - Սպարտակ Մոսկուա
Պալ - Լիվըրփուլ
●Գ. ՌՄԲԱԿ
Կէնք - Ռեյալ Մատրիդ
Ա. Էս. Ռոմա - ԱԷԷ Աթլէթ
●Դ. ՌՄԲԱԿ
Ռոզենպորկ - Լիոն
Այաքս Ամսթերտամ - Ինթեր Միլան
ՉՈՐԵՎՇՏԱՐԹԻ, 13 ՆՈՅՆԵՐԵՐ
●Ե. ՌՄԲԱԿ
Ֆէյլենուրտ Ռոթերտամ - Նիքէրլ
Տիւնս Զիլտ - Եուվելցըուս
●Զ. ՌՄԲԱԿ
Մանչ. Յունայթըդ - Պալէր Լեւերքուզը
Օլիմպիաքոս - Մաքապի Հայֆա
●Է. ՌՄԲԱԿ
Պալէրն Միլան - Լանս
Ա. ՍԷ. Միլան - Տեփորթիօ Զորուս
●Ը. ՌՄԲԱԿ
Լոքոմոթիւ Մոսկուա - Ֆ. Է. Պրիօ
Պարսելոնա - Կալաթասարայ

ՌԻՇԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒՆ

RELAX ՇԱՍ.

Կը ստանձնէ ոսկերիչներու յատուկ ՈՍԿԻԻ ԹԱՓԾՈՒ (GOLD CASTING) ԳՈՐԾԵՐ

արդիական ելեկտրոնիք մեքենաներով

- Մաքրութիւն
- Փայլք
- Բծախնդիր աշխատանք
- Մասնագիտացած անձնակազմ

Մատչելի գին, ձրի սպասարկութիւն

Շեռաձև / ֆաքս: 01 - 889188
եւ 03 - 375724

1 ՆՈՅՆԵՐԵՐ - 7 ՆՈՅՆԵՐԵՐ 2002

ԵՐԿԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
«ԵՐԿԻՐ» ՇԱՐՎԹԱԹԵՐԹԻ

Էջ 5. «Րաֆֆի Յովհաննիսեանը իր առաջադրումը պայմանաւորուած է ժողովրդի կարծիքով» խորագիրը կրող յօդուած մը կը կարդանք «Երկիր»ի այս շաբթուան թիւին մէջ: Այս յօդուածին մէջ կ'ըսուի, թէ Հայաստանի նախկին արտաքին գործոց նախարարը պատրաստ է յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն իր թեկնածութիւնը դնել. եթէ «որոշումը ծնի հասարակական երկխոսութեան»:

Էջ 7. «Երկիր»ի տնտեսական բաժնով կայ ուշագրաւ յօդուած մը. «Տոլարացումը սպառնալից չափեր է ընդունել»: Այս յօդուածին մէջ կը ըսուի, որ ներկայիս Հայաստանի մէջ կատարուող ֆինանսական եւ առեւտրական գործարքներուն մէջ աւելի մեծ է ամերիկեան ցուրտի դերակատարութիւնը, ինչ որ որեւէ զարգացած երկրի մէջ վիրաւորական պիտի նկատուի:

Էջ 10. «Մայրենիի հեթանոսական վարկաբեկումը» յօդուածը կ'անդրադառնայ Ֆրիտորիս Խլաքեանի հեղինակած հայոց լեզուի դասագիրքին, որ չորս տարիէ ի վեր կը գործածուի Հայաստանի հանրակրթական դպրոցներուն մէջ, ատենին բազմիցս ընձադատուած է եւ ներկայիս ալ կը շարունակէ մտահոգել ուսուցչութիւնը ու լեզուաբան մասնագետները: Անդրադառնալ կայ նաեւ համալսարանական գործածութեան յատկացումը եւ վերջերս յոյս տեսած նման որակով հրատարակութեան մը:

Էջ 12. «Հայ նոր սերնդի դարբնոց Երոպայում», հարցազրոյց Համազգային կրթական եւ մշակութային միութեան Կեդրոնական վարչութեան ատենակազմի Սկրտիչ Սկրտիչեանի հետ:

DAY WATER

RECOMENDED FOR BABIES

DAY WATER

Clean & Safe Water
Under Hygienic Condition
NATURAL - PURELIGHT - LOW IN SODIUM

Free Delivery

19 Litre @ 2000.L

Approved By Rain Water

DAY WATER, Tel.: 03/435298

